ՀԻՆ ԳՅՈՒՄՐԻՆ՝ ՆՈՐ ԳԾԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ*



Փիլիսոփայության պատմությունից ամենաշատն ինձ տպավորել է պյութագորականների՝ երկնակամարների մասին տեսությունը, որի համաձայն տարբեր ուղեծրերով շարժվող մոլորակներն իրենց թռիչքի ընթացքում գեղեցիկ մեղեդիներ են արձակում՝ տիեզերքը լցնելով աստվածային երաժշտությամբ: Մարդիկ, սակայն, չեն լսում այդ քաղցրաձայն հնչյունները, որովհետև ծնվում են՝ դրանք «ականջի մեջ ունենալով»:

Նմանօրինակ վիճակում հայտնվել էի նաև ես: Ծնված լինելով Գյումրիում՝ վերջինիս գեղեցկությունները ես արդեն «ունեի իմ աչքերում»: Ուստի դրանք հայտնաբերեցի տասնամյակներ անց միայն,

* Լևոն Լաճիկյանը արվեստաբան և մշակութային մեկնաբան լինելուց զատ նաև հրապարակախոսական ու գիտական հոդվածների հեղինակ է, որոնք պարբերաբար լույս են տեսնում հայրենի և արտերկրի մամուլում ու գիտական հանդեսներում: Նրա գրքերից վերջինը՝ «Խաչվող ճանապարհներ» վերնագրով, լույս տեսավ 2006-ին Երևանում: Գրքում առաջին անգամ ընթերցողին մատուցվեցին հեղինակի վարպետ գծանկարները՝ Լևոնին ներկայացնելով որպես նկարիչ: Վերջին շրջանում նա զբաղված է իր ծննդավայրի՝ Գյումրիի ճարտարապետական դիմանկարը գծելով: Թե ինչո՞ւ հանկարծ որոշեց զբաղվել նկարչությամբ, կտեղեկանաք՝ ընթերցելով Լևոն Լաճիկյանի հոդված-խոստովանությունը: *Խմբ.*



երբ արդեն ապրում էի Երևանում և եղել էի աշխարհի շատ քաղաքներում՝ Նյու Յորքում, Փարիզում, Հռոմում, Վենետիկում, Վիեննայում և այլուր:

Վերջերս էի այցելել իմ հայրենի քաղաք: Ի զարմանս մայրաքաղաք Երևանի, որտեղ հին շինություններից գրեթե բան չի մնացել, այստեղ դրանք պահպանվել են ամբողջական թաղամասերով: Իսկական վայելք է դրանցով քայլելը: Երևանյան համատարած վարդագույնից հետո էապես փոխվում է տեսադաշտը, երբ հայացքիդ առջև պարզվում են սև սրբատաշ քարերով կերտված և կարմիր տուֆով շրջանակված պատուհաններ ունեցող, մեկը մյուսից գեղեցիկ հնակառույցները: Կարելի էր ուղղակի շնչահեղձ լինել այդ աննկարագրելի գեղեցկությունից: Եվ ակամա ցանկություն առաջացավ ցուցադրել այն: Ձեռքս մատիտ վերցրի, ու այդպես ծնվեց «Իմ Գյումրի» նկարաշարը:

Հին պատմություն ունի իմ քաղաքը: Այն իր ուղեգրություններում հիշատակել է հույն պատմիչ Քսենոփոնը: Կումայրի բնակավայրի մասին առաջին պատմական տեղեկությունը հաղորդում է Ղևոնդ պատմիչը (VIII դար): Կումայրի անունը դարերի ընթացքում վերածվել է Գյումրիի: Այդ ընթացքում փոխվել է նաև ինքը՝ քաղաքը:

Տնտեսական կյանքի աշխուժացումը Գյումրիում սկսվել է հատկապես ռուս-պարսկական (1826-1828թթ.) և ռուս-թուրքական (1828-1829թթ.) պատերազմներից հետո, երբ Կարսից, Բայազետից, Մուշից ու Կարինից հազարավոր հայեր գաղթեցին այստեղ: Օգտվելով ռուսական կայսրության տված արտոնություններից՝ նրանք որոշում են ընտանիքներով բնակություն հաստատել Ախուրյան գետի ձախակողմյան ափին գտնվող այս բնակավայրում՝ սկսելով նոր տներ կառուցել և շենացնել այն:

Սև բերդի կառուցման ավարտի կապակցությամբ 1837թ. հոկտեմբերի 3-ին Գյումրի է ժամանում Նիկոլայ I ռուսական կայսրը՝ ի պատիվ իր Ալեքսանդրա կնոջ այն անվանակոչելով Ալեքսանդրապոլ: Սակայն անվանափոխված Գյումրին քաղաքային բնակավայր է հռչակվում 1840-ին՝ ենթարկվելով նոր ու կանոնավոր հատակագծման և կառուցապատման: Գաղտնիք չէ, որ Ալեքսանդրապոլը հիմնականում արհեստավորական քաղաք է եղել, որտեղ զարգացող արհեստների թիվն անցնում էր հարյուրից: Զարգացած էին հատկապես երկաթագործությունը, զինագործությունը, ոսկերչությունը, կաշեգործությունը և այլն: Դրանք համաձույլ էին հանդես գալիս հատկապես կառուցապատման ընթացքում: Գյումրեցի վարպետների կառուցած յուրաքանչյուր շենքի վրա թե՛ ճարտարապետի, թե՛ քարագործ շինարարի, թե՛ երկաթագործի ու փայտագործի աշխատանքի դրոշմը կա: Մինչ օրս

աչք են շոյում շենքերի բազմաշերտ քիվերը, երկաթակուռ դարպասները, լուսամուտների փայտե երեսակալները: Հետաքրքիրն այն է, որ գեղեցիկի բոլոր օրենքներով կառուցվել են ոչ միայն թանգարաններն ու հասարակական շինությունները, այլև սովորական բնակելի տները:

Գյումրու ժողովրդական ճարտարապետությունն ինքնատիպ է ու գրավիչ: Դրանում տարրեր կան թե՛ ռուսական քաղաքաշինությունից, թե՛ եվրոպական կլասիցիզմից ու նեոկլասիցիզմից, թե՛ XX դարասկզբի մոդեռնիզմից և թե՛ խորհրդային կոնստրուկտիվիզմից: Գյումրեցի արհեստավորները, սակայն, դրանք այնպիսի վարպետությամբ են համադրել ու տեղայնացրել, որ ստեղծել են ազգային բնիկ միջավայր: Այդ գեղեցիկ միջավայրն էլ իր հերթին կրթում է մարդու հոգին, գեղագիտորեն դաստիարակում նրան, օժտում արվեստագետի հայացքով:

Գյումրիում գեղեցիկի հանդեպ նախաստեղծ սեր կա, որ վերածվում է մերթ կամարակապ մուտքի, մերթ դրվագազարդ ջրամանի, մերթ էլ դառնում է գեղանկարչական կտավ ու երաժշտական ստեղծագործություն: Պատահական չէ, որ այստեղ են ծնվել ու ստեղծագործել կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը, բանաստեղծներ Ավետիք Իսահակյանն ու Հովհաննես Շիրազը, բազմաթիվ հայտնի նկարիչներ, քանդակագործներ ու ճարտարապետներ:

1988-ի դեկտեմբերյան երկրաշարժը կարծես շրջանցեց հին Գյումրին: «Հինը մնաց, նորը գնաց»,- սիրում են կրկնել քաղաքի բնակիչները: Իրոք, ստորգետնյա ցնցումներն անզոր եղան քանդել-ավերելու գյումրեցի վարպետների ձեռքով ստեղծված ամուր հնակառույցները: Դրանք, բարեբախտաբար, մնում են՝ որպես քաղաքի հնության վավերագրեր և նրա մարդկանց հոգու ազնվության հավաստագրեր:

Մտադիր եմ այսուհետև նույնպես թղթին հանձնել քաղաքիս բակերի ու փողոցների, բազմաթիվ անկյունների ու հրապարակների պատկերները՝ ցույց տալու համար, որ Գյումրին հպարտանալու քաղաք է: Քաղաք, որն ունի ոչ միայն անցյալ, այլև ապագա:

Լևոն Ե. Լաճիկյան

OLD GYUMRI IN NEW DRAWINGS

Levon E. Latchikian